

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ  
ԻԶԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ

Համայնքի 2022 թվականի

ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ



Կազմել է՝ համայնքի ղեկավար Արթուր Ճաղարյանը

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 2022թ.-ի թիվ ...որոշմամբ  
(նիստի ամսաթիվը)

Իջևան 2022 թ.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	3
1. Համայնքի տեսլականը և ոլորտային նպատակները.....	4
2. Տղաական ինքնակառավարման մարմիններ.....	5
3. Իջևան խոշորացված համայնքի բյուջե.....	6
4. Համայնքի ֆինանսական միջոցների վերլուծություն և կանխատեսում.....	7
5. Իջևան խոշորացված համայնքի ոլորտային ծրագրերը.....	8
5.1 Ժողովրդագրություն և սոցիալական կազմ.....	8
5.2 Չբոսաշրջություն.....	10
5.3 Ձեռնարկատիրություններ և տնտեսություն.....	11
5.4 Բնակտնտեսություն և համատիրություն.....	13
5.5 Գյուղատնտեսություն .....	14
5.6 Տրասպորտ, ճանապարհային տնտեսություն, կոմունալ և շրջակա միջավայրի պահպանություն.....	19
5.7 Չարգացման ծրագրեր, առևտուր, սպասարկում և գովազդ .....	36
5.8 Կրթություն, մշակույթ, սպորտ, երիտասարդության հետ տարվող աշխատանքներ.....	37

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Համայնքի հնգամյա զարգացման ծրագրի կատարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով մշակվել է «Համայնքի տարեկան աշխատանքային պլանը» (ՏԱՊ):

Տարեկան պլանավորումը հնարավորություն է տալիս ի մի բերել տարբեր աղբյուրներից (համայնքի և պետական բյուջեներ, սփյուռք, դոնոր, միջազգային, հասարակական կազմակերպություններ, ձեռներեցներ, բարերարներ, միջհամայնքային ծրագրեր և այլն) ֆինանսավորվող ծրագրերն ու միջոցառումները: Տարեկան աշխատանքային պլանի միջոցով հստակեցվում են հնգամյա զարգացման ծրագրով նախատեսված տարեկան կտրվածքով անելիքները, ծրագրերը և միջոցառումները, որոնք բխում են երկարաժամկետ ռազմավարական նպատակներից: Այն նպաստում է ֆինանսական միջոցներով դեռևս չապահովված ծրագրերի և միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հայթայթման ռազմավարության հստակեցմանը՝ նախանշելով այն միջոցառումները, որոնք անհրաժեշտ են համայնքում լրացուցիչ միջոցներ ներգրավելու համար՝ համագործակցելով պետական, միջազգային, հանրային և մասնավոր գործընկերների հետ:

Իջևան խոշորացված համայնքի 2022 թվականի տարեկան աշխատանքային պլանը բաղկացած է 5 բաժիններից՝

- 1-ին բաժնում սահմանվում է համայնքի տեսլականը և ոլորտային նպատակները,
- 2-րդ բաժնում ներկայացվում է համայնքի 2022 թվականի ծրագրերի ցանկը և տրամաբանական հենքերը՝ ըստ ոլորտների,
- 3-րդ բաժնում ներկայացվում է համայնքային գույքի կառավարման 2022 թվականի ծրագիրը,
- 4-րդ բաժնում ներկայացվում է համայնքի ՏԱՊ-ի ֆինանսավորման պլանը,
- 5-րդ բաժնում ներկայացվում է համայնքի ՏԱՊ-ի մոնիթորինգի և գնահատման պլանը:

## 1. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԱԿԱՆՈՐ ԵՎ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Իջևան համայնքի տեսականը (հեռահար նպատակը) համայնքի կայուն զարգացումն է, որին համայնքը ձգտում է հասնել 5 տարվա ընթացքում: Հաշվի առնելով Իջևան համայնքի աշխարհագրական դիրքը՝ դարձնել մաքուր, բարեկարգ, առևտրի և սպասարկման, կրթական և մշակութային, բնակչության համար բավարար կենսապայմաններ ունեցող, զբոսաշրջության համար գրավիչ և բարձր արտադրողականությամբ գյուղատնտեսական բնակավայր:

Բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները:

Համայնքային ենթակառուցվածքները դարձնել առավել մատչելի և որակյալ, ստեղծել հարմարավետ պայմաններ բարեկեցիկ կյանքի համար: Համայնքում զարգացնել փոքր և միջին արտադրական ձեռնարկությունները՝ հատկապես տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում, կրթական, մշակութային և մարզական հաստատությունները շահառու խավերի համար դարձնել առավել մատչելի և որակյալ, երիտասարդության ժամանցի կազմակերպման համար ստեղծել հարմար պայմաններ, համայնքի բնակիչներն ունենան բարելավված կենցաղային և բնակարանային պայմաններ: Համայնքի հնգամյա զարգացման ռազմավարությունն է՝ բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային, առողջ ապրելակերպի և հանգստի պայմանները, համայնքը դարձնել զբոսաշրջության զարգացման կենտրոն՝ մաքուր, բարեկարգ և գրավիչ: Դրանց հասնելու ռազմավարական նպատակներն են՝

- զարգացնել տեղական ինքնակառավարումը.
- զարգացնել մարդկային կապիտալը.
- զարգացնել գյուղատնտեսության, անասնապահության ոլորտները.
- զարգացնել համայնքային ենթակառուցվածքները.
- զարգացնել փոքր ու միջին ձեռնարկությունները.
- զարգացնել համայնքի նախադպրոցական կրթահամակարգը:

## 2. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

2021թ. նոյեմբերի 14-ին կայացան տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ: Ընտրվեց համայնքի ղեկավար և համայնքի ավագանի: Ավագանին բաղկացած է 27 անդամներից:

Համայնքի ղեկավարի աշխատակազմի և համայնքային ենթակայության կազմակերպությունների հաստիքների թիվը հետևյալն է՝ 165: Համայնքային ենթակայության մանկապարտեզների և կազմակերպությունների աշխատակազմի թիվը հետևյալն է՝ 566:

**Համայնքային ծառայությունն առավել որակյալ դարձնելու համար անհրաժեշտ է՝**

- կազմակերպել ավագանու գործունեությունն առավել արդյունավետ՝ ապահովելով բազմակարծության և բացարձակ թափանցիկության աշխատանքային միջավայր.
- ավագանու նիստերի ընթացքում լսել կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների պետերի, ՀՈԱԿ-ների տնօրենների, քաղաքացիներին ծառայություններ մատուցող այլ կազմակերպությունների ղեկավարների հաշվետվությունները.
- համայնքային աշխատողների պարբերական վերապատրաստումներ՝ փոխանակման և փորձի փոխանակման ծրագրեր.
- թարմացնել համայնքապետարանի կայքը՝ այն դարձնելով ինտերակտիվ՝ բնակչության հետ կապը դարձնելով առավել արդյունավետ.
- ելնելով ավագանու նիստերի նորակառույց դահլիճի հնարավորությունից՝ ապահովել բնակիչների մասնակցությունը իրենց հուզող հարցերի քննարկմանը:

**3. ԻԶԵՎԱՆ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵ  
2022Թ.**

		Տարեկանայան		
Տողի	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	Ընդամենը	այդ թվում	
NN		(ս.4+ ս5)	վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ</b>	<b>1,908,224,727.00</b>	<b>1,711,808,300.00</b>	<b>196,416,427.00</b>
1	Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում	613,565,144.60	555,165,487.60	58,399,657.00
2	Ոռոգում	44,487,993.60	0.00	44,487,993.60
3	ճանապարհային տրանսպորտ	255,507,654.20	18,992,200.00	236,515,454.20
4	Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)	-154,000,000.00	0.00	-154,000,000.00
5	Աղբահանում	207,867,867.70	207,617,867.70	250,000.00
6	Ջրամատակարարում	13,604,000.00	13,604,000.00	0.00
7	Փողոցների լուսավորում	62,700,000.90	62,700,000.90	0.00
8	Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	12,399,322.20	1,636,000.00	10,763,322.20
9	Թանգարաններ և ցուցասրահներ	8,751,300.00	8,751,300.00	0.00
10	Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ	70,489,100.00	70,489,100.00	0.00
11	Այլ մշակութային կազմակերպություններ	29,313,931.80	29,313,931.80	0.00
12	Նախադպրոցական կրթություն	376,756,812.00	376,756,812.00	0.00
13	Արտադպրոցական դաստիարակություն	219,481,600.00	219,481,600.00	0.00
14	Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)	19,300,000.00	19,300,000.00	0.00
15	ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ	128,000,000.00	128,000,000.00	0.00

**4. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ**

Համայնքի 2022թ. բյուջեի մուտքերի ցուցանիշները և 2022թ. բյուջեների մուտքերի կանխատեսումը

Հ/հ	Մուտքերի անվանումը	2022թ. փաստացի (հազար դրամ)
1	2	3
	<b>ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ (I+II+III)*</b>	<b>1908222,7</b>
1.	<b>ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ</b>	-
1.1	<b>Գույքային հարկեր անշարժ գույքից</b>	<b>83124,9</b>
	Գույքահարկ շենքերի և շինությունների համար	63086,0
	Հողի հարկ	20038,9
1.2	<b>Գույքային հարկեր այլ գույքից</b>	<b>225568,0</b>
	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	207962,8
	Տեղական տուրքեր	17605,2
1.3	<b>Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ</b>	<b>10500,0</b>
	Պետական տուրքեր	10500,0
2.	<b>ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇԵՆՈՐՀՆԵՐ</b>	-
2.1	<b>Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ</b>	<b>1270309,3</b>
ա)	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	1210253,0
բ)	Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ	7625,9
գ)	Կապիտալ սուբվենցիա	52430,4
3.	<b>ԱՅԼ ԵՎ ԱՄՈՒՏՆԵՐ*</b>	<b>2324,5</b>
3.1	<b>Գույքի վարձակալությունից նկատուտներ</b>	<b>21208,3</b>
	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ	21208,3
	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր	-
3.2	<b>Համայնքի բյուջեի նկատուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, այդ թվում</b>	<b>85408,6</b>
	Պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ	-
3.3	<b>Մուտքեր սույժերից, տուգանքներից</b>	<b>800,0</b>
II.	<b>ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՏՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ (1+2+3+4)</b>	<b>154000,0</b>
1.	<b>Հիմնական միջոցների իրացումից մուտքեր</b>	<b>154000,0</b>
	Անշարժ գույքի իրացումից մուտքեր	-
2.	<b>Զարտադրված ակտիվների իրացումից մուտքեր, տրանսֆերտներ</b>	-
3.	<b>Համայնքի բյուջեի հաշվում միջոցների մնացորդները հաշվետու ժամանակահատվածում</b>	<b>54979,1</b>

## 5. ԻՋԵՎԱՆ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

### 5.1 ԺՈՂՈՎՐԴԱԳՐԹՈՒՅՈՒՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄ

*Բնակավայրի բնակչության թիվը կազմում է 47332 մարդ:*

Համայնքի բնակչությունը

N	Տարիքային խմբեր	Ընդամենը	Արական	Իգական
1	0-5 տարեկան	2906	1506	1400
2	6-19 տարեկան	8627	4501	4126
3	20-64 տարեկան	30208	14353	15855
4	64 տարեկանից ավել	5591	2235	3356
	Ընդամենը	47332	22595	24737

Բնակչության սոցիալական կազմը

Սոցիալական կազմը	Քանակը
կանայք	24737
Տղամարդիկ	22595
Թոշակառուներ	8500
Միակողմանի ծնողազուրկ երեխաներ	128
Հաշմանդամներ	1495
Գործազուրկներ	1743
ընտանիքների (ծխերի) թիվը	5100
Փարոս/ընտանեկան նպաստների	1557

Բնակավայրում առկա են մոտ 12366 զբաղված քաղաքացիներ

#### Հիմնախնդիրներ`

- համայնքում սոցիալապես անապահով ընտանիքներին աջակցման անհրաժեշտություն.
- հաշմանդամների սոցիալական ինտեգրման ծրագրերի ոչ բավարար քանակ.
- հաշմանդամություն ունեցող անձանց համար` սոցիալական, առողջապահական, հոգեբանական եւ խնամքի ծառայությունների մատուցման անհրաժեշտություն.
- թեքահարթակների թույլ բազա.
- զբաղվածության խնդիրների աստիճանական կարգավորում եւ գործազրկության մակարդակի նվազում.
- տարեցների եւ միայնակ ծերերի համար` սոցիալական, առողջապահական, հոգեբանական եւ խնամքի ծառայությունների մատուցման անհրաժեշտություն:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ	ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ
Վոռլոյ Վիժն Հայաստան	<ul style="list-style-type: none"> <li>• 2022 թ-ին Իջևան խոշորացված համայնքի և Վոռլոյ Վիժն Հայաստան կազմակերպությունը ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորվող &lt;&lt;Հասանելի համայնքային ծառայություններ&gt;&gt; /ԿԼԱՍ/ ծրագրի շրջանակներում կաջակցի համայնքներում</li> </ul>



	<p>սոցիալական ծառայությունների զարգացմանը, համայնքի սոցիալական աշխատանքի մասնագետի ինստիտուտի ներդրման և մասնագետների կարողությունների զարգացմանը:</p> <ul style="list-style-type: none"> <li>• 2020-2022 թթ. Իջևան խոշորացված համայնքի Ազատամուտ բնակավայրում «Վորլդ Վիժն Հայաստան» Երեխաների պաշտպանության հիմնադրամ կազմակերպությունը իրականացնում է Ցերեկային խնամքի կենտրոն ծրագիրը: Ծրագիրը աջակցում է կրթության առանձնահատուկ պայմաններ կարիք ունեցող երեխաներին:</li> </ul>
<b>Հայկական Գարմիր խաչ</b>	<ul style="list-style-type: none"> <li>• 2022 թ – ին Հայկական Գարմիր խաչ կազմակերպությունը թվով 100 միայնակ տարեց մարդկանց սոցիալական փաթեթ կտրամադրվի</li> </ul>
<b>Հասարակական կազմակերպություններ</b>	<ul style="list-style-type: none"> <li>• 2022 թ-ին Իջևան խոշորացած համայնքում գործող հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության արդյունքում/ ՍՈՍ, Ամերկյան փարոս հիմնադրամ/ աջակցել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված մարդկանց:</li> </ul>

**Հաշմանդամների, տարեցների և սոցիալապես անապահով ընտանիքներին աջակցման ծրագիր**

<b>Սոցիալական պաշտպանության թույլ մակարդակ</b>					
<b>Ծրագրի նպատակը</b>	<b>Չափի միավոր</b>	<b>Քանակ</b>	<b>Պահանջվող ներդրում (հազ. դրամ)</b>	<b>Շահառուների քանակ (մարդ)</b>	<b>Ծրագրի տևողություն</b>
<b>Աջակցություն սոցիալական ոլորտին</b>	Բնակավայր	19	12000	1500	1 տարի
<b>Միջոցառումներ(գործողություններ)</b>	<ol style="list-style-type: none"> <li>1.Շահառուների քարտեզագրում և կարիքների գնահատում</li> <li>2.Ֆինանսական միջոցներով ապահովվում</li> <li>3.Շահառուներին համապատասխան աջակցություն</li> </ol>				
<b>Ակրեդիտացիոն արդյունքներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1 Համայնքում գործում են սոցիալական ոլորտին աջակցման ծրագրեր</li> <li>2 Շահառուներն օգտվում են սոցիալական աջակցությունից</li> <li>3 Համայնքում սոցիալական խնդիրներ ունեցողները բավարարված են աջակցությունից</li> </ol>				

## 5.2 ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

Իջևան համայնքը հանդիսանալով Տավուշի մարզի վարչաքաղաքական եւ հոգեւոր մշակութային կենտրոնը իր բնական եւ մարդկային ռեսուրսներով, կարող է դառնալ ՀՀ տուրիզմի հրապուրիչ կենտրոններից մեկը: Նախկինում քաղաքում գործող հյուրանոցը, տուրիստական բազան, տրանսպորտային կապերը, բարեկարգ ճանապարհները, կանաչապատ ծաղկուն փողոցներն ու այգիները նպաստում էին զբոսաշրջության ավանդույթների ձեւավորմանը: Այսօր անհրաժեշտություն է դարձել վերականգնել այդ ավանդույթները: Տուրիզմի զարգացման ուղղությամբ համայնքի հնարավորությունների ճիշտ օգտագործումը կխթանի տնտեսական զարգացմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը, աղքատության մակրոդակի նվազմանը: Տարեցտարի ավելանում են Իջևան համայնք այցելող զբոսաշրջիկների թիվը, ինչպես արտասահմանից, այնպես էլ հանրապետության տարբեր մարզերից: Իջևան խոշորացած համայնքում գործում են թվով 94 հյուրանոցները և ռեստորաններ: Իջևան խոշորացած համայնքը Այսօր խիստ անհրաժեշտություն է ժամանակակից հանգստի ժամանցի գործարար համալիր ինֆրաստրուկտուրայի ստեղծումը որի մեջ կարելու է հյուրանոցների, տուրիստական, ժամանակակից առևտրի տների, տուրիստական կենտրոնի առկայությունը, ինչպես նաև ներքաղաքային ճանապարհների եւ փողոցների բարեկարգումը, լուսավորության ցանցերի ավելացումը եւ վերանորոգումը: Համայնքի աշխուժացմանը կնպաստի նաև փառատոնների կազմակերպումը, ագրոտուրիզմի, էքստրեմալ տուրիզմի, էկոտուրիզմի եւ ուխտագնացային տուրիզմի զարգացումը, որոնց նախադրյալները կան համայնքում: Ոլորտը զարգացնելու համար հարկավոր է կազմակերպել դասընթացներ՝ ոլորտով զբաղվողների համար:

### Հիմնախնդիրներ՝

- տեսարժան վայրերի սահմանափակ քանակ.
- հյուրընկալության ոլորտի մասին հավաստի եւ ամբողջական տեղեկատվության պակաս.
- կողմնորոշումը ամառային հանգստի վրա.
- ժամանցի եւ զվարճությունների վայրերի բացակայություն.
- զբոսաշրջային տարածքների սանիտարահիգիենիկ վիճակ անտառահատումներ.
- տեղեկատվական ցուցանակների բացակայություն.
- մշակութային միջոցառումների կազմակերպման եւ տարածման մասին տեղեկատվության պակաս.
- Հայաստանի սահմաններից դուրս պատշաճ ներկայացման պակաս.
- բարձրակարգ հյուրանոցների բացակայություն.
- ագրոտուրիզմի, գաստրոտուրիզմի և էկոտուրիզմի բացակայություն

### ***Սրբավայրերի, հուշակոթողների և թանգարանների տարածքների պահպանում և բարեկարգում***

Ժամանակին պահպանում և բարեկարգում չկատարելու պատճառով՝ ճանապարհները և շրջակայքը դարձել են անբարեկարգ					
Ծրագրի նպատակը	Զափի միավոր	Քանակ	Պահանջվող ներդրում (հազ. դրամ)	Ծահառուների	Ծրագրի տևողություն

				<b>քանակ (մարդ)</b>	
<b>Ստեղծել պայմաններ տուրիզմի զարգացման համար</b>	Բնակավայր	19	2000	4000	1 տարի
<b>Միջոցառումներ(գործողություններ)</b>	<i>1. Պահպանում և բարեկարգում պահանջվող շինությունների գույքագրում</i> <i>2. Ֆինանսական միջոցներով ապահովվում</i> <i>3. Գործողությունների իրականացում</i>				
<b>Ակրնկավոր արդյունքներ</b>	1 Բնակավայրերի բոլոր դիտարժան վայրերը և դրանց ճանապարհները բարեկարգ և խնամված են 2 Ընդգրկվել են տուրիստական ուղիներում 3 Տուրիզմի զարգանում է				

**Դասընթացների կազմակերպում՝ դրամաշնորհային ծրագրերին դիմելու և տուրիզմի վերաբերյալ**

<b>Տուրիզմի ոլորտի զարգացման համար անհրաժեշտ է՝ սպասարկման էթիկա, մենեջմենտ, տուրիզմի տեսակները, դրանց զարգացման ուղիները և գիդ զբոսավարների վերապատրաստման դասընթացներ, տոնավաճառների կազմակերպում, վարպետաց դասեր</b>					
<b>Ծրագրի նպատակը</b>	<b>Չափի միավոր</b>	<b>Քանակ</b>	<b>Պահանջվող ներդրում (հազ. դրամ)</b>	<b>Ճահառուների քանակ (մարդ)</b>	<b>Ծրագրի տևողություն</b>
<b>Գիտելիքների բարձրացում, որը կնպաստի վոլորտի զարգացմանը</b>	դասընթաց	3	1000	400	1 տարի
<b>Միջոցառումներ(գործողություններ)</b>	<i>1. Բացահայտել դասընթացների կարիք ունեցող բնակչության և տնտեսվարողների շրջանակը</i> <i>2. Ֆինանսական միջոցներով ապահովվում</i> <i>3. Միջոցառումների ժամանակացույցի կազմում</i> <i>4. Միջոցառումների իրականացում</i>				
<b>Ակրնկավոր արդյունքներ</b>	1 Համայնքում մատուցվում է նոր որակի ծառայություններ 2 Չարգանում է տուրիզմը 3 Տնտեսվարողները համագործակցում են միմիանց հետ 4 Դասընթացի մասնակիցները իրենց փորձը փոխանցում են ցանկացողներին 5 Համայնքներում կատարվող ներդրումները հաջողված են 6 Տնտեսվարումը դառնում է հեշտ և շահավետ				

### 5.3 ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Իջեաւն համայնքում գրանցված ձեռնարկությունները եւ անհատ ձեռնարկատերերը ըստ գործունեության ոլորտների

N	Գործունեություն	Չափի միավոր	Իրավաբանակ անանձիք, Ձեռնարկություններ	Անհատձեռն արկատերեր
1.	Գյուղատնտեսություն	հատ	3	258
2.	Վերամշակող արդյունաբերություն	հատ		25
3.	Էլեկտրաէներգիա, գազ, ջրամատակարարում	հատ	3	
4.	Շինարարություն	հատ	9	13
5.	Առևտուր, մեքենաների, կենցաղային սարքավորումների նորոգում	հատ	204	415
6.	Հյուրանոցներ, ռեստորաններ	հատ	12	82
7.	Տրանսպորտ և կապ	հատ	5	18
8.	Անշարժ գույքի գործակալություններ	հատ	3	1
9.	Առողջապահություն և սոց. ծառայություն	հատ	23	20
10.	Կոմունալ	հատ	1	3
11.	Թեթև արդյունաբերական	հատ	2	
12.	Մանրամթերք արտադրող ձեռնարկություններ	հատ	6	34
13.	Զովագուցիչ ըմպելիք և հանքային ջրեր արտադրող ձեռնարկություններ	հատ		12
14.	Գինու-կոնյակի արտադրություն	հատ	1	7
15.	Կահույք, բետոնյա իրեր և քարարտադրող ձեռնարկություններ	հատ	5	17
16.	Կարի արտադրամաս	հատ		12

Համայնքի արդյունաբերության առաջատար ճյուղը մշակող արդյունաբերությունն է: Առավել զերակշռող են սննդարդյունաբերությունը, քարամշակումն ու փայտամշակումը: Մարզում արտադրվում է բենտափոշի, երեսպատման սալիկներ, գինիներ, հագուստ, ծաղիկներ, ելակ պահածոներ եւ այլն: Մարզում արտադրվող արդյունաբերական արտադրանքից արտաքին շուկա են արտահանվում գինիներ, հագուստ, ծաղիկ, քարե եւ փայտե արտադրատեսակներ: Կան մանր ու միջին ձեռնարկատերեր, որոնք արժեքավոր ծառատեսակներից պատրաստում են զանազան շինանյութեր, գյուղատնտեսական գործիքներ, կենցաղային գործիքներ: Քարի վերամշակումը նույնպես ավանդական ճյուղ է, քանի որ կան տարբեր հանքավայրեր՝ քարերի բազմաթիվ տեսակներով: Տնտեսության բարելավման հետ միասին զարգանում է նաեւ այդ արտադրատեսակը: Աստիճանաբար աշխուժանում են նաեւ սպասարկման ոլորտի հաստատությունները: Գործում են Արդշինբանկի, ACBA-կրեդիտ ագրիկոլ բանկի, ՎՏԲ բանկի, Կոնվերսբանկի, Արարատբանկի, ABB բանկի, AEB բանկի, Յունի բանկի մասնաճյուղերը՝ իրականացնելով ծառայություններ: Ռեստորանները, խանութները զգալի թիվ են կազմում,

որոնք աստիճանաբար առավել բարետես ու հարմարավետ են դառնում եւ իրականացնում են որակյալ սպասարկում: Համայնքում կան նաեւ առանձնատուն-հյուրատներ՝ հագեցած անհրաժեշտ պայմաններով, որոնք արդեն մի քանի տարի է ընդունում են զբոսաշրջիկներ արտերկրից, հանրապետության այլ բնակավայրերից: Տարեցտարի ավելանում է ընտանեկան տուրիզմով զբաղվող ձեռներեցների թիվը: Համայնքի բնակչությունն ըստ զբաղվածության բաժանվում է մի քանի խմբի՝ մանր եւ միջին առևտրով զբաղվողներ, պետական եւ տեղական ինքնակառավարման կառուցվածքներում աշխատողներ, գործազուրկներ, սեզոնային շինարարություններում աշխատողներ եւ սպասարկման ոլորտում աշխատողներ:

**Հիմնախնդիրներ՝**

- օտարերկրյա ներդրողների համար ցածր գրավչություն.
- նպաստավոր եւ խրախուսող օրենսդրական դաշտի կատարելագործման կարիք.
- թողարկվող արտադրանքի ընդհանուր ծավալում արտահանվող արտադրանքի փոքր ծավալ:
- քույր քաղաքների հետ փոխադարձ փորձի փոխանակման եւ համատեղ բիզնես ծրագրերի իրագործմանն աջակցության ցուցաբերում.
- համայնքային տնտեսության բոլոր ոլորտներում ինովացիոն նախաձեռնությունների խրախուսում եւ աջակցություն.
- արտոնյալ պայմաններով տարածքների հատկացում:

**5.4 ԲՆԱԿՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ**

N		Քանակ
1.	Համայնքի բազմաբնակարան շենքերի և բնակարանների թիվը	104/3158
2.	Բնակֆոնդի ընդհանուր և բնակելի մակերեսները	230270
3.	Համայնքային սեփականություն	1
4.	Մասնավոր (սեփականաշնորհված)	230270
5.	Բազմաբնակարան վթարային բնակելի շենքեր և բնակարաններ	1
6.	Համայնքում առկա ժամանակավոր կացարաններ	50

**Հիմնախնդիրներ՝**

- բազմաբնակարան շենքերի տանիքների անմխիթար վիճակ.
- վերանորոգման կարիք ունեցող շենքերի առկայություն.
- բակային տարածքների անբարեկարգ վիճակ.
- խաղահրապարակների անհրաժեշտություն.
- համատիրությունների արդյունավետ կառավարման եւ ֆինանսական պլանավորման ոչ բավարար մակարդակ.
- համատիրությունների ռեսուրսների սահմանափակություն.

- քաղաքացիների մոտ համատիրությունների գործունեության վստահության պակաս.
- համատիրությունների գործունեության կարգավորման եւ կառավարման փորձի փոխանակման կարիք:
- ապաստարանների վերանորոգման եւ վերազինման անհրաժեշտություն
- խմելու ջրագծերի համակարգերի կառուցումն եւ վերանորոգման անհրաժեշտություն
- ոռոգման ջրագծերի համակարգերի կառուցումն եւ վերանորոգման անհրաժեշտություն

## 5.5 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Իջեւան խոշորացված համայնքի բնակչության 25-30 % զբաղվում է գյուղատնտեսությամբ: Իջեւան համայնքը հանրապետության վառ արտահայտված գյուղատնտեսական շրջաններից է: Անասնաբուծության մեջ առաջատար ճյուղեր են համարվում խոշոր եղջերավոր անասնաբուծությունն ու խոզաբուծությունը: Վերջին տարիներին զարգանում է նաև մեղվաբուծությունը: Բուսաբուծության մեջ առաջատար ճյուղերն են հացահատիկային մշակաբույսերի մշակությունը, խաղողագործությունն ու պտղաբուծությունը:

Գյուղատնտեսական նշանակության հողերը բաշխված են հետևյալ կերպ՝ .

Տեսակ	հա
Խոտհարքներ	4202.25
Արոտավայրեր	12793.43
Վարելահողեր	6594.45
Պտղատու այգի	281,21
Այլ հողատեսքեր	3438.64

### Հիմնախնդիրներ՝

- գյուղացիական տնտեսությունների անբավարար վիճակ.
- գյուղտեխնիկայի անհրաժեշտություն.
- ցածր բերքատվություն՝ տարիներ շարունակ հողը չպարարտացնելու պատճառով.
- հանդամիջյան ճանապարհների ոչ բարվոք վիճակ.
- տոհմային անասնապահության փոքր քանակություն.
- գյուղմթերքի իրացման խնդիր
- խելացի գյուղատնտեսությունով զբաղվողների սակավություն
- գյուղմթերքների իրացման եւ վերամշակման հնարավորությունների ցածր մակարդակ.
- սահմանափակ բնակավայրերի՝ դիտարկման տակ գտնվող հողեր.
- ժամանակակից տեխնոլոգիաների ներդրում.
- գյուղատնտեսությամբ զբաղվողների կարողությունների բարձրացում.

- մեծածավալ ինտենսիվ այգիների հիմնման անհրաժեշտություն /շուկա ապահովելու նպատակով.
- ‘Ֆերմերից մինչև պատառաքալ’ շղթայի զարգացման անհրաժեշտություն.
- հեռագնա արոտավայրերի դեգրադացում/ ոռոգման համակարգերի կիրառում.
- սերտիֆիկացման տնկարանային տնտեսությունների բացակայություն/ մասնավորապես՝ մերձարեւադարձային մշակաբույսեր եւ այլն.
- բիզնես ոլորտի համար ոչ բարենպաստ ագրարային քաղաքականություն:

**Աչաջուր, Այգեհովիտ-Վազաշեն, Դիտավան բնակավայրերի ոռոգման համակարգի արդիականացում**

Բնակավայրի ոռոգման համակարգը դեռևս խորհրդային տարիներից կապիտալ վերանորոգում չի կատարվել, կան բազմաթիվ խնդիրներ ոռոգման համակարգում, չի ոռոգվում շուրջ 450 հա հողատարածք					
Ծրագրի նպատակը	Չափի միավոր	Քանակ	Պահանջվող ներդրում (հազ. դրամ)	Ծահառուների քանակ (մարդ)	Ծրագրի տևողություն
<i>Ստեղծել բարձր բերքատվությամբ հողեր</i>	հա	450	452031	9365	1 տարի
<b>Միջոցառումներ</b> (գործողություններ)	<ol style="list-style-type: none"> <li>1. Նախագծանախահաշվային աշխատանքների մրցույթների հայտարարում</li> <li>2. Նախագծանախահաշվային աշխատանքների իրականացում</li> <li>3. Ծինարարական աշխատանքների մրցույթների հայտարարում</li> <li>4. Արդյունքների ամփոփում ,պայմանագրերի կնքում</li> <li>5 . Ֆինանսական ներդրման համաֆինանսավորում (Կառավարություն, Հովնանյան հիմնադրամ, համայնք)</li> <li>6 . Ծինարարական աշխատանքների իրականացում</li> <li>7. Աշխատանքների հանձնում-ընդունում և շահագործման հանձնում</li> </ol>				
<b>Ակրեկավոր արդյունքներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1 Համայնքում գյուղատնտեսական նշանակության հողերը ոռոգվում են</li> <li>2 Բնակչությունը աճեցնում է ավելի եկամտաբեր մշակաբույսեր</li> <li>3 Ոռոգվող հողատարածքները մշակվում են և զգալիորեն ավելացել է բերքատվությունը</li> <li>4 Կազմակերպվում է նաև գյուղմթերքների արտահանում</li> <li>5 Մեղմացել է գյուղերից արտագաղթը</li> <li>6 Կավելանա վարձու աշխատողների քանակը</li> <li>7 Բնակավայրը դառնում է գրավիչ ներդրողների համար</li> </ol>				

**Բերքաբեր բնակավայրի ոռոգման համակարգի արդիականացում**

Բնակավայրի ոռոգման համակարգը դեռևս խորհրդային տարիներից կապիտալ վերանորոգում չի կատարվել, կան բազմաթիվ խնդիրներ ոռոգման համակարգում, չի ոռոգվում շուրջ 120 հա հողատարածք					
Ծրագրի նպատակը	Չափի միավոր	Քանակ	Պահանջվող ներդրում	Ծահառուների	Ծրագրի տևողություն

			(հազ. դրամ)	քանակ (մարդ)	
<b>Ստեղծել բարձր բերքատվությանը հողեր</b>	մ	5000	228766	389	7 ամիս
<b>Միջոցառումներ (գործողություններ)</b>	<ol style="list-style-type: none"> <li>1. Նախագծանախահաշվային աշխատանքերի մրցույթների հայտարարում</li> <li>2. Նախագծանախահաշվային աշխատանքերի իրականացում</li> <li>3. Շինարարական աշխատանքերի մրցույթների հայտարարում</li> <li>4. Արդյունքների ամփոփում ,պայմանագրերի կնքում</li> <li>5 . Ֆինանսական ներդրման համաֆինանսավորում (Կառավարություն Հայաստան համահայկական հիմնադրամ)</li> <li>6 . Շինարարական աշխատանքների իրականացում</li> <li>7. Աշխատանքերի հանձնում-ընդունում և շահագործման հանձնում</li> </ol>				
<b>Ակրեկավորող արդյունքներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1 Համայնքում գյղատնտեսական նշանակության հողերը ոռոգվում են</li> <li>2 Բնակչությունը աճեցնում է ավելի եկամտաբեր մշակաբույսեր</li> <li>3 Ոռոգվող հողատարածքները մշակվում են և զգալիորեն ավելացել է բերքատվությունը</li> <li>4 Կազմակերպվում է նաև գյուղմթերքների արտահանում</li> <li>5 Մեղմացել է գյուղերից արտագաղթը</li> <li>6 Կավելանա վարձու աշխատողների քանակը</li> <li>7 Բնակավայրը դառնում է գրավիչ ներդրողների համար</li> </ol>				

### **Դիտավան բնակավայրում հիդրոմեմբրանային ջրավազանի կառուցում**

Բնակավայրի ոռոգման համակարգը դեռևս խորհրդային տարիներից կապիտալ վերանորոգում չի կատարվել, ոռոգման համակարգի համար անհրաժեշտ է հիդրոմեմբրանային ջրավազան					
Ծրագրի նպատակը	Չափի միավոր	Քանակ	Պահանջվող ներդրում (հազ. դրամ)	Շահառուների քանակ (մարդ)	Ծրագրի տևողություն
<b>Ստեղծել բարձր բերքատվությանը հողեր</b>	հատ	1	40000	350	1 տարի
<b>Միջոցառումներ (գործողություններ)</b>	<ol style="list-style-type: none"> <li>1. Նախագծանախահաշվային աշխատանքերի մրցույթների հայտարարում</li> <li>2. Նախագծանախահաշվային աշխատանքերի իրականացում</li> <li>3. Շինարարական աշխատանքերի մրցույթների հայտարարում</li> <li>4. Արդյունքների ամփոփում ,պայմանագրերի կնքում</li> <li>5 . Ֆինանսական ներդրման համաֆինանսավորում (ԵՄ)</li> <li>6 . Շինարարական աշխատանքների իրականացում</li> <li>7. Աշխատանքերի հանձնում-ընդունում և շահագործման հանձնում</li> </ol>				
<b>Ակրեկավորող արդյունքներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1 Բնակավայրում գյղատնտեսական նշանակության հողերը ոռոգվում են</li> <li>2 Բնակչությունը աճեցնում է ավելի եկամտաբեր մշակաբույսեր</li> <li>3 Ոռոգվող հողատարածքները մշակվում են և զգալիորեն ավելացել է բերքատվությունը</li> <li>4 Կազմակերպվում է նաև գյուղմթերքների արտահանում</li> <li>5 Մեղմացել է գյուղերից արտագաղթը</li> <li>6 Կավելանա վարձու աշխատողների քանակը</li> <li>7 Բնակավայրը դառնում է գրավիչ ներդրողների համար</li> </ol>				



**Դասընթացների կազմակերպում՝ դրամաշնորհային ծրագրերին դիմելու և գյուղատնտեսության վերաբերյալ**

<p>Գյուղատնտեսության ոլորտի զարգացման համար անհրաժեշտ է կազմակերպել՝ դրամաշնորհների դիմելու, Էտի և ձևավորման, պտղատուների հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարի միջոցառումներ, ոռոգման արդիական համակարգեր, ջերմոցային տնտեսություններ, ինտենսիվ այգեգործություն և ոչ ավանդական մշակաբույսեր, հողի նախապատրաստում և ցանք, խոշոր եղջերավորների ինֆեկցիոն և ինվազիոն հիվանդությունների բուժում և կանխարգելում, գյուղատնտեսական կենդանիների բուժում և կերակրում, տոհմային անասնաբուծություն դասընթացների կազմակերպում</p>					
Ծրագրի նպատակը	Չափի միավոր	Քանակ	Պահանջվող ներդրում (հազ. դրամ)	Ճահառուների քանակ (մարդ)	Ծրագրի տևողություն
Գիտելիքների բարձրացում, որը կնպաստի վոլորտի զարգացմանը	դասընթաց	7	2000	300	1 տարի
Միջոցառումներ(գործողություններ)	<p>1. Բացահայտել դասընթացների կարիք ունեցող բնակչության և տնտեսվարողների շրջանակը                  2. Ֆինանսական միջոցներով ապահովվում                  3. Միջոցառումների ժամանակացույցի կազմում                  4. Միջոցառումների իրականացում</p>				
Ակրեկավոր արդյունքներ	<p>1 Տնտեսվարողները համագործակցում են միմիանց հետ                  2 Դասընթացի մասնակիցները իրենց փորձը փոխանցում են ցանկացողներին                  3 Գյուղատնտեսությունը զարգանում է, եկամուտներն ավելանում                  4 Համայնքներում կատարվող ներդրումների հաջողված են                  5 Տնտեսվարումը դառնում է հեշտ և շահավետ</p>				

**Հեռագնա արտոնների ճանապարհների բարելավում**

<p>Գյուղատնտեսական աշխատանքները կազմակերպելու համար անհրաժեշտ է հեռագնա արտոնների, դաշտամիջան և դեպի սարամասեր տանող ճանապարհների բարելավումը, քանի որ շատ ճանապարհներ սելավաջրերից դառնում են անանցանելի</p>					
Ծրագրի նպատակը	Չափի միավոր	Քանակ	Պահանջվող ներդրում (հազ. դրամ)	Ճահառուների քանակ (մարդ)	Ծրագրի տևողություն
Մտեղծել բարենպաստ պայմաններ գյուղատնտեսության զարգացման համար	Բնակավայր	19	25000	5000	1 տարի

<b>Միջոցառումներ</b> (գործողություններ)	<ol style="list-style-type: none"> <li>1. Բարելավման ենթակա ճանապարհների գույքագրում</li> <li>2. Ֆինանսական միջոցներով ապահովում</li> <li>3. Աշխատանքների իրականացում</li> </ol>
<b>Ակրնկավող արդյունքներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1 Համայնքը սեփական տեխնիկայով իրականացնում է բարելավման աշխատանքները</li> <li>2 Գյուղատնտեսական աշխատանքները կատարվում են ժմանակին</li> <li>3 Մեքենաները և գյուղտեխնիկան անխոչնդոտ հասնում են համապատասխան վայրեր</li> </ol>

### **Գյուղատնտեսության ոլորտին ուղղված աջակցման ծրագրեր**

<b>Գյուղատնտեսական աշխատանքները կազմակերպելու համար անհրաժեշտ է բնակչությանը աջակցել թեթև գուղտեխնիկայով, որի շնորհիվ զգալի կպակասի ձեռքի աշխատանքը, կնվազի աշխատաժամանակը և ծախսերը</b>					
<b>Ծրագրի նպատակը</b>	<b>Զափի միավոր</b>	<b>Քանակ</b>	<b>Պահանջվող ներդրում (հազ. դրամ)</b>	<b>Ծահառուների քանակ (մարդ)</b>	<b>Ծրագրի տևողություն</b>
<b>Չարգացնել գյուղատնտեսությունը</b>	Բնակավայր	15	15000	10000	1 տարի
<b>Միջոցառումներ</b> (գործողություններ)	<ol style="list-style-type: none"> <li>1. Բնակչությանը առավել անհրաժեշտ տեխնիկայի գույքագրում</li> <li>2. Ֆինանսական միջոցներով ապահովում(Մակի պարենի և գյուղի զարգացման ծրագիր)</li> <li>3. Նախաձեռնող խմբի ընտրություն</li> <li>4. Հատկացում</li> </ol>				
<b>Ակրնկավող արդյունքներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1 Ֆերմերները և գյուղացիները սարքավորումներն օգտագործում են տնամերձերում և փոքր հողակտորներում գյուղատնտեսական աշխատանքներ կատարելու համար</li> <li>2 Գյուղատնտեսական աշխատանքները կատարվում են ժմանակին</li> <li>3 Աշխատանքները կատարվում են ավելի էֆեկտիվ և ագրոկանոններին համապատասխան</li> <li>4 Աշխատուժի խնայողություն</li> </ol>				

### **5.6 ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ԿՈՄՈՒՆԱԼ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ**

Իջեւան համայնքն ունի համայնքային ենթակայության 420 հազ. քառ. մետր մակերեսով փողոցներ եւ ճանապարհներ: Համայնքով անցնում է Երեւան-Թբիլիսի մայրուղին: Ճանապարհների գերակշիռ մասը բնահողային են եւ գտնվում են անբարեկարգ վիճակում: Համայնքի կարելորագույն խնդիրներից է ճանապարհների եւ մայրերի բարեկարգումը (ասֆալտապատում, սալիկապատում եւ խճապատում), երթուղիների նշանների, նշագծումների եւ տեղեկատվական ցուցանակների տեղադրումը:

Համայնքում գործում է 3 տաքսի սերվիս, որոնց աշխատանքը չի բավարարում ներկա պահանջները: Իջեւան քաղաքում գործում է միկրոավտոբուսային 3 երթուղի, որոնց միջոցով կիրականացվեն գյուղական բնակավայրերում՝ կանոնավոր ուղեւորափոխադրումներ չեն իրականացվում: Նախատեսվում է գնել 8 միկրոավտոբուս, որոնք կկարգավորեն կանոնակարգված ուղեւորափոխադրումներ, կկազմակերպվեն էքսկուրսիաներ:

Իջեւան համայնքի օդի աղտոտվածությունը չի գերազանցում նորմատիվային մակարդակը:

Իջեւան համայնքի հիմնական գետը Աղստեն է: Գետն աղտոտվում է արտադրական եւ կենցաղային հոսքաջրերով, որոնք գետ են թափվում անկազմակերպ առանց մաքրման: Հոսքաջրերի մաքրման կայանը ներկայումս չի աշխատում:

Չնայած համայնքի կանաչապատվածության բավականին բարձր աստիճանի, ընդհանուր օգտագործման կանաչ տարածքներով /զբոսայգիներ, պուրակներ/ բնակչության ապահովվածությունը դեռեւս ցածր է: Հատուկ նշանակության կանաչ տարածքների զգալի մասը կարիք ունեն մեծածավալ վերականգնողական միջոցառումների:

### **Ջրամատակարարում եւ ջրահեռացում**

Ջրաապահովվածության պայմաններով համայնքը գտնվում է տնտեսական նպատակներով օգտագործման համար պիտանի ստորգետնյա ջրերով ապահովված գոտում: Իջեւան քաղաքում ջրամատակարարման եւ ջրահեռացման համակարգերը կառավարվում են „Վեոլիա ջուր՝ ՓԲԸ-ի կողմից, իսկ գյուղական վայրերում այդ համակարգերը համայնքի սեփականություն են:

Իջեւան համայնքի ամենամեծ գետը Աղստեն է: Այն աղտոտվում է արտադրական եւ կենցաղային հոսքաջրերով, որոնք գետ են թափվում առանց մաքրման կոյուղու ցանցով եւ անկազմակերպ ջրնետքերով: Հոսքաջրերի մաքրման կայանը ներկայումս չի աշխատում:

### **Ջրային կառույցներ**

Ջրային կառույցները նախագծային փաստաթղթերով ունեն բնապահպանական նշանակություն. նախատեսված են մեղմելու միկրոկլիման, ամբողջացնելու քաղաքի ճարտարապետական տեսքը եւ համարվում են քաղաքի այցեքարտը: Դրանցից են՝

- Հրապարակի շատրվանները, որն ունի կապիտալ վերանորոգման կարիք.
- Անկախության փողոցի արհեստական լճակը.
- Սահմանադրության հրապարակում գտնվող շատրվանը, որն նույնպես վերականգնման կարիք ունի:

- “Սպիտակ ջուր” ջրամբարը, որն ունի ավազից, տիղմից եւ ջրաբերակներից մաքրման կարիք.
- “Ջողազի” ջրամբարը, որը համայնքի ամենամեծ ջրային պաշարներ ունեցող ջրամբարն է, սահմանակից է Ադրբեջանի հանրապետությանը:
- Առավելագույն խորությունը 60մ, ջրատարությունը 45 մլն. մ3:

### **Արտաքին լուսավորություն**

Իջեւան համայնքում նախորդ տարիներին զգալի աշխատանքներ են կատարվել լուսավորության ցանցի բարելավման ուղղությամբ, սակայն դեռ կան կատարելու աշխատանքներ: Իջեւան համայնքի հենասյուների վրա տեղադրված լուսատուների թիվը կազմել է 3826 լամպ, իսկ լուսավորության ցանցի երկարությունը՝ 106,31կմ է:

### **Աղբահանություն, սանիտարական մաքրում**

Համայնքի սանիտարական մաքրման ենթակա փողոցների, հրապարակների, կամուրջների, մայթերի եւ այլ կառույցների ընդհանուր մակերեսը կազմում է 143,5 հազ. քմ:

### **Հիմնախնդիրներ**

- միջհամայնքային ճանապարհների անբավարար վիճակ
- ներհամայնքային բակերի եւ փողոցների անմխիթար վիճակ
- հեռագնա արտոններ տանող ճանապարհների անմխիթար վիճակ
- սելավատների սակավություն
- համայնքի կանաչ գոտիների եւ զբոսայգիների պահպանման եւ նոր կանաչ գոտիների ստեղծման անհրաժեշտություն
- միջհամայնքային եւ ներքաղաքային ուղեւորափողադրումների ցածր մակարդակ
- հաշմանդամություն ունեցող մարդկանց տեղաշարժման հարմարավետության թույլ բազա
- հատուկ տեխնիկաների անբավարար բազա
- ջրային կառույցների ոչ բարվոք վիճակ.
- ջրավազաններից ջրի մեծ չափերի կորուստ.
- անսարք ջրային կառույցների առկայություն.
- գետակները հակասանիտարական վիճակում են եւ շարունակվում են աղտոտվել.
- ջրային ռեսուրսների ճիշտ օգտագործում:
- արտաքին լուսավորության լուսակետերի անբավարար քանակ.
- արտաքին լուսավորության ցանցի անբավարար տեխնիկական վիճակ.
- էներգատար լամպերի օգտագործում:
- ջրային ռեսուրսների ճիշտ օգտագործում
- աղբամանների, աղբահանության հատուկ մեքենաների թույլ բազա.
- աղբավայրերի անմխիթար վիճակ եւ տարածքի շատ բնակավայրերում աղբավայրերի բացակայություն:

## **Տրանսպորտ, ճանապարհային տնտեսության ոլորտային ծրագիր**

**Իջևան քաղաքի Ազամարտիկների հրապարակից մինչև Ս. Օհանյան փողոցը հատող խաչմերուկի սափարտապատում**

<b>Ճանապարհը գտնվում է քաղաքի կենտրոնական մասում և 2 գլխավոր փողոցները միացնում է իրար, սակայն անմխիթար լինելու պատճառով կարելի է ասել չի շահագործվում</b>					
Ծրագրի նպատակը	Չափի միավոր	Քանակ	Պահանջվող ներդրում (հազ. դրամ)	Շահառուների քանակ (մարդ)	Ծրագրի տևողություն
<b>Բնակչության տեղաշարժը դարձնել ավելի անվտանգ և թեթևացնել կենտրոնական փողոցների ծանրաբեռնվածությունը:</b>	քմ	2600	40476	12000	1 տարի
<b>Միջոցառումներ(գործողություններ)</b>	<ol style="list-style-type: none"> <li>1. Նախագծանախահաշվային աշխատանքների մրցույթների հայտարարում</li> <li>2. Նախագծանախահաշվային աշխատանքների իրականացում</li> <li>3. Շինարարական աշխատանքների մրցույթների հայտարարում</li> <li>4. Արդյունքների ամփոփում ,պայմանագրերի կնքում</li> <li>5. Ֆինանսական ներդրման համաֆինանսավորում(Սուբվենցիոն ծրագիր)</li> <li>6. Շինարարական աշխատանքների իրականացում</li> <li>7. Աշխատանքների հանձնում-ընդունում և շահագործման հանձնում</li> </ol>				
<b>Ակրեկավորող արդյունքներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1. Իջևան համայնքի կենտրոնական փողոցների ծանրաբեռնվածությունը թեթևացել է</li> <li>2. Ապահովված է միակողմանի երթևեկություն, հարակից փողոցը նույնպես արդեն միակողմանի է:</li> <li>3. Քաղաքը դառնում է գրավիչ ներդրումների համար</li> <li>4. Տուրիզմը զարգանում է</li> </ol>				

**Իջևան քաղաքի Անկախության փողոցի թիվ 1,2,3,6,8,10,16,18,20,22,26,28, Ազատամարտիկների 2 բակերի սափարտապատում**

<b>Բակերը դեռևս խորհրդային ժամանակներից չի վերանորոգվել և գտնվում է անմխիթար վիճակում, առաջացել են խոր ջրափոսեր</b>					
Ծրագրի նպատակը	Չափի միավոր	Քանակ	Պահանջվող ներդրում (հազ. դրամ)	Շահառուների քանակ (մարդ)	Ծրագրի տևողություն
<b>Բնակչության տեղաշարժը դարձնել անվտանգ և անցանելի:</b>	քմ	6335	95704	7000	1 տարի
<b>Միջոցառումներ(գործողություններ)</b>	<ol style="list-style-type: none"> <li>1. Նախագծանախահաշվային աշխատանքների մրցույթների հայտարարում</li> <li>2. Նախագծանախահաշվային աշխատանքների իրականացում</li> <li>3. Շինարարական աշխատանքների մրցույթների հայտարարում</li> <li>4. Արդյունքների ամփոփում ,պայմանագրերի կնքում</li> </ol>				

	<p>5. Ֆինանսական ներդրման համաֆինանսավորում(Սուբվենցիոն ծրագիր)</p> <p>6. Շինարարական աշխատանքների իրականացում</p> <p>7. Աշխատանքների հանձնում-ընդունում և շահագործման հանձնում</p>
<b>Ակրնկավորող արդյունքներ</b>	<p>1. Իջևան համայնքի բազմաբնակարան շենքերի բակերը բարեկարգ են:</p> <p>2. Ջրափոսերի հարցը լուծվել է</p> <p>3. Քաղաքը դառնում է գրավիչ</p> <p>4. Տուրիզմը զարգանում է</p>

**Իջևան քաղաքի Մայիսի -28 փողոցի 41,47, Ազատամարտիկների փողոցի 4, 4-Ա, 6,8 և Երիտասարդական 7,14 բնակելի շենքեր սաֆարտապատում**

<i>Բակերը դեռևս խորհրդային ժամանակներից չի վերանորոգվել և գտնվում է անմխիթար վիճակում, առաջացել են խոր ջրափոսեր</i>					
<b>Ծրագրի նպատակը</b>	<b>Չափի միավոր</b>	<b>Քանակ</b>	<b>Պահանջվող ներդրում (հազ. դրամ)</b>	<b>Շահառուների քանակ (մարդ)</b>	<b>Ծրագրի տևողություն</b>
<i>Բնակչության տեղաշարժը դարձնել անվտանգ և անցանելի:</i>	քմ	6574	99802	7500	1 տարի
<b>Միջոցառումներ(գործողություններ)</b>	<p>1. Նախագծանախահաշվային աշխատանքների մրցույթների հայտարարում</p> <p>2. Նախագծանախահաշվային աշխատանքների իրականացում</p> <p>3. Շինարարական աշխատանքների մրցույթների հայտարարում</p> <p>4. Արդյունքների ամփոփում ,սլայմանագրերի կնքում</p> <p>5. Ֆինանսական ներդրման համաֆինանսավորում(Սուբվենցիոն ծրագիր)</p> <p>6. Շինարարական աշխատանքների իրականացում</p> <p>7. Աշխատանքների հանձնում-ընդունում և շահագործման հանձնում</p>				
<b>Ակրնկավորող արդյունքներ</b>	<p>1. Իջևան համայնքի բազմաբնակարան շենքերի բակերը բարեկարգ են:</p> <p>2. Ջրափոսերի հարցը լուծվել է</p> <p>3. Քաղաքը դառնում է գրավիչ</p> <p>4. Տուրիզմը զարգանում է</p>				

**Իջևան քաղաքի Թատերական փողոցից դեպի պատկերասրահ և գրուսայգի տանող ճանապարհի սաֆարտապատում**

<i>Ճանապարհը գտնվում է քաղաքի կենտրոնական մասում, երկար տարիներ չի վերանորոգվել, կարիք ունի կապիտալ վերանորոգման</i>					
<b>Ծրագրի նպատակը</b>	<b>Չափի միավոր</b>	<b>Քանակ</b>	<b>Պահանջվող ներդրում (հազ. դրամ)</b>	<b>Շահառուների քանակ (մարդ)</b>	<b>Ծրագրի տևողություն</b>

<b>Ունենալ բարեկարգ և գրավիչ քաղաք</b>	քմ	471	7077	5500	5 ամիս
<b>Միջոցառումներ(գործողություններ)</b>	<ol style="list-style-type: none"> <li>1. Նախագծանախահաշվային աշխատանքների մրցույթների հայտարարում</li> <li>2. Նախագծանախահաշվային աշխատանքների իրականացում</li> <li>3. Շինարարական աշխատանքների մրցույթների հայտարարում</li> <li>4. Արդյունքների ամփոփում ,պայմանագրերի կնքում</li> <li>5. Ֆինանսական ներդրման համաֆինանսավորում(<b>Էկոնոմ քանկ, համայնք</b>)</li> <li>6. Շինարարական աշխատանքների իրականացում</li> <li>7. Աշխատանքների հանձնում-ընդունում և շահագործման հանձնում</li> </ol>				
<b>Ակրեդիտացիոն արդյունքներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1. Պատկերասրահ և զբոսայգի այցելուների համար ստեղծվել է հարմարավետ պայմաններ</li> <li>2. Ջրափոսերի հարցը լուծվել է</li> <li>3. Քաղաքը դառնում է գրավիչ</li> <li>4. Տուրիզմը զարգանում է</li> </ol>				

